

ԿՐԵՆԵԿԱՆ—ԲՈՐՈՅՈՒԿԱՆ

ՀՕՅՆ ԿԵՆԴԱԿԻ

Ես եմ հացն կենդանի, որ յերկնից իշեալ,
Յովհ. Զ, 51.

Դաւիսը՝ գաշտերումն է աճում մեր հացը, Բարեքեր հոգի, բաւ սերմի, ջանասէր երկրագործի և յաջող եղանակի ենք կարօտ, որպէս զի շահեմարանը լցուի հատիկներով և հաց մատակարարի մեր սեղանին եւ ահա այս հացի համար են պաղատում հաղարաւոր մարդիկ ամենին յայտնի հին ազօթքի սրբագործուած բառերով. Զհաց մեր հանապաղորդ տնւր մեզ այսօր։ Հաց ունենալն է կեանիք առաջին կարիքը։ Աւր հաց չկայ, այնտեղ թշուառութիւն է տիրում, ուստի և քրիստոնէական պարտականութիւն է հոգալ, որ ամեն տան հաց լինի. Եւ սակայն ճշմարիտ է այն խօսքը, թէ Ո՞չ միայն հացիւ կեցցէ մարդ, նա կարիք ունի նոյնպէս և ներքին հոգեսոր սննդի, որպէս զի ներքուստ չհիւծուի ու կորստեան մատնուի։

Բայց իսկապէս ինչո՞վ պէտք է հոգեսոր սննունդ մատակարարել։ Գրքերմիւ Բատ երեւթիւն այսպէս պիտի լինէր, այն ինչ բիւրաւոր գրքիր իրօք անսնունդ են, քանի որ հաց չեն՝ տալիս մեզ, այլ միմիայն խօսքեր, ըմբռնումներ, մանրամասնութիւններ, լաւադոյն գէպըւմ՝ յարդ, փրփուր և կամ ազ, և ոչ իսկական սննունդ։ Նոքա զուրկ են իրական գիտողութիւնից ու կենսական զօրութիւնից, ինչպէս և նոցա հեղինակները՝ ոգեսորութիւնից ու աւիւնից, Թուղթը միայն այն գէպքումն է կեանք ներշնչում մարդուս, երբ սրտի ջերմ զդացմունքով ու արիւնով է

գրուած, սառն աշխատութիւնն անզօր է ջերմացնելու։ Այսպէս ուրեմն հոգեոր սնունդ տալ կարող են միայն և եթ կենսաբար, պարզահայեաց և ջերմազգաց անձնաւարութիւնները։ Նոքա միայն ընդունակ են հաց լինելու հօգիների համար։ Ուր որ զօրեղ, ներքինով առաղջ անձն կայ, շրջապատը սնունդ է առնում նորանից։ Արի մարդը մեծ յաղթանակ է տանում, որովհետեւ նա հազարաւոր անձանց ոգեսրում է։ Սոքա սնուում են նորա հաստատակամութեամբ ու այդպիսով իրենք ևս ամրապնդւում։

Աւստի և Յիսուս չի ասում՝ Ես բերում եմ ձեզ կենդանի հացը։ Եատ աւելի պարզ և սրտառուչ է նորա խօսքը՝ Ես եմ հացն կենդանի։ Նա հէնց ինքն է՝ իւր ամբողջ էութեամբ, մտածութեամբ և գործով, մարդկութեան հոգեոր սնունդը։ Նորանից են ճաշակում ու սնուում այն բոլոր սերունդները, որոնք նորանից յետոյ են։ Երբ սոքա ձանձրութեան չափ յագենում են աշխարհիս շաքարն ու աղը, պտուղներն ու կարկանդակները վայելելուց, ապա կարօտով նորից իրենց հայեացըն ուզդում են դէպի կենդանի հացը, որ թարմ ու անպաճոյն է մնում դարէ դարւ Երբ սոքա հոգեկան քազգ են զգում և իմաստասէրների ու երազողների գոներն ապարդիւն բազխում, ապա ձեռնունայն վերադառնում են և պահանջկոտ մանուկների պէս «հաց», միայն հաց» պաղատում, Յիսուս օրուայ մեծութիւն չէ և ոչ նոր ձիթենիներով զարդարուն հերոս, այլ այն, ինչ որ և եղել է մեր ամբողջ հոգեոր կեանքի խարիսխը։ Ուրիշներն այլ ծառայութիւններ են մատուցել մարդկութեան, մինչ նա է հացը։

Ամեն ոք դիտէ այն հրաշալի պատմութիւնը, թէ ինչպէս Յիսուս փոքր ինչ հացով հինգ հազար հոգի կերակրեց։ Նա կտրում ու կտրում, տալիս ու տալիս էր, բայց հացը չվերջացաւ, նոքա կերան-կշտացան, դեռ սակառներով էլ փշրանքներ հաւաքեցին։ Եւ այս նախապատկեր է այն բաշխման, որ Յիսուս կատարում է մարդուս հոգեոր կեանքում։ Նա իւր հացից կտրել ու բաշխել է զանազան դարերում և մարդկային տարբեր ցեղերի, նա մասնատրել է

մեր հայրերին և մեղ, և սակայն Նորա պաշարն անհատ-
նում է: Յիսուսի անձնաւորութեան հոգեսոր բովանդակու-
թիւնն անսպառ է: Նա ապրել է բոլոր ժամանակների հա-
մար: Եթէ մենք նոյն իսկ մտածելու լինէինք, թէ Նորան
վերջապէս լիսովին հասկացել ենք, մեղ համար այլ ևս ոչ
մի նոր դազտնիք չի մնացել Նորա մէջ, այնուամենայնիւ-
տակաւին շատ փշանքներ կը մնային, որոնցից դեռ ևս դա-
րեր պիտի մնուեն: Միւս բոլոր հոգիներն ունեցել են իրենց
ժամանակը, բայց Յիսուս Նոցանից աւելի կենսունակ է:
Նա մասն և բաժին ունի Աստուծոյ յափտենականութիւ-
նից, քանի որ Նորա աղդեցութիւնը չի թուլանում: Դեռ
այսօր էլ Նա ամենուրեք ունի երկու սեռի ծանօթ և ան-
ծանօթ հետևողներ, որոնք Նորան են դիմում և ասում:
«Մենք թափառում ենք անսպատռմ, Դու ես մեր մա-
նահան, Դու ես հացն, որ յերկնից իջեալ»:

Գերմ. փոխադր. Ա. Վ. 8.-Ա.

